Fintechaudit

«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

Պռոշյան 2/1, Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ, բն. 47
2/1 Proshyan str., Yerevan 0019, Republic of Armenia
Legal address: 47 apt. Gr. Artsruni str., 78/3

Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072
Հեռ/Tel: (374 10) 229 238
Ֆաքս/Fax: (374 10) 229278
www.fintechaudit.am / info@fintechaudit.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ -ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և ճշմարիտ ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիքներ՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում:

Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին

Fintechaudit

«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

Պռոշյան 2/1, Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ., բն. 47
2/1 Proshyan str., Yerevan 0019, Republic of Armenia
Legal address: 47 apt. Gr. Artsruni str., 78/3

Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072
Հեռ/Tel: (374 10) 229 238
Ֆաքս/Fax: (374 10) 229 278
www.fintechaudit.am / info@fintechaudit.am

վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

27 մարտի 2015թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր

Անդրեաս Հովհաննիսյան
Աուդիտի ղեկավար-Բաժնետեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY
00101437
«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ»
«ФИНТЕХ АУДИТ»
"FINTECH AUDIT"

«ԱՐՑԱԽ ՀԷԿ»ԲԲԸ

2014Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1)Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

Արժույթային ռիսկեր. Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա: Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան, որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ, այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

2014թ.-ի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է մոտ 166 416 583 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որից «Սարսանգ ՀԷԿ »՝ 103 718 080 կվտ/ժ, «Թրղի Կասկադ »՝ 26 701 437 կվտ/ժ, «Մատաղիս Կասկադ»՝ 35 997 066 կվտ/ժ , ինչը կազմում է մոտ 2 795 359 691 ՀՀ դրամ:

Ընկերության վերցրած և մարված վարկերի ծավալները բերված են թիվ 1 աղյուսակում:

«Արցախ ՀԷԿ »ԲԲԸ վարկերի ծավալը 2014թ. ընթացքում

Աղյուսակ 1

Վարկի կամ փոխառության աղբյուրը	**Նոր վարկեր**	**Մարումներ**
ՓԲԸ«Արցախբանկ»	-	400 000 USD
ՓԲԸ«Արմսվիսբանկ»	400 000 USD, 144 200 EUR	583 127.08 USD, 405 827.09 EUR
ՍՊԸ«ԲԼԵՍՍ»	-	180 000 000 AMD
Արցախի ներդրումային հիմնադրամ	-	46 634.12 USD
Ֆ/Ա Սերոբ Այվազյան	-	220 000 USD
Ընդամենը	**400 000 USD, 144 200 EUR**	**1 249 761.2 USD, 405 827.09 EUR, 180 000 000 AMD**

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում.

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2014թ. Աղյուսակ 2

Ցուցանիշ	Հազ.դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	2,795,360
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-689,773
Իրացման ծախսեր	-2,555
Վարչական ծախսեր	-250,657
Գործառնական գործունեությունից շահույթ	1,831,326
2014թ. Շահույթ	720,792
Դեբիտորական պարտք	1,113,162
Կրեդիտորական պարտք	4,908,547

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2014թ.

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	31,12,2014թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով(EPS)	67.68
Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE)	5.93%
Ակտիվների շահութաբերություն(ROA)	4.24%
Զուտ շահույթի մարժա(NPM)	25.79%
Կապիտալի համարժեքության գործակից	71.69%
Ֆինանսական կախվածության գործակից	39.50%
Բացարձակ իրացվելության գործակից	0.048
Ընթացիկ իրացվելության գործակից	2.76
Ընդհանուր իրացվելության գործակից	3.02
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.23
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	113.08
Պաշարների շրջանառելիության գործակից	8.73
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	41.81
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.142
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	2575.43

2)Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այն դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը կառանձնացներ հետևյալ իրադարձությունները:

- 2014թ. հունվարի 27-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը:

Առաջարկվեց հաստատել Ընկերության 2014 թվականի հաստիքացուցակը և ընկերության 2014 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով:

Քվեարկության արդյունքներով որոշվեց.

Ընկերության 2014 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Ս. Թևոսյան – Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ
2. Հ. Բոյաջյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
3. Ա. Պետրոսյան - Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ

Հաստատել Ընկերության 2014 թվականի հաստիքացուցակը:

- 2014թ. մարտի 11-ին ընկերությունը հայտարարեց մրցույթ ընկերության 2014թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն

իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով:

- 2014թ. մարտի 20-ին տեղի ունեցավ Ընկերության 2014 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծված մրցութային հանձնաժողովի նիստ: Որոշվեց ՝ Ընկերության Տնօրենների Խորհրդի նիստին ներկայացնել «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ հայտը՝ որպես «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2014 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնողի թեկնածու:
- 2014թ. մարտ ամսում «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:
- 2014թ. ապրիլի 22-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկության կարգով տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը, որի ընթացքում որոշվեց՝

2014թ. հունիսի 2-ին, ժամը 11:00-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 26 հասցեում գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2014թ. ապրիլի 23-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Բաժնետերերի տարեկան ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել էլետրոնային փոստի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ծանուցումը տրամադրել առձեռն կամ փոստով: Հաստատել քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը:

Առաջարկվեց հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը՝ ընդգրկելով հետևյալ հարցերը.

1. Տարեկան հաշվետվությունների ներկայացում
2. 2013թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ աուդիտորի եզրակացության ներկայացում
3. Ընկերության 2014թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում (Ընկերության խորհրդի կողմից մրցույթում հաղթող է ճանաչվել «Ֆինտեխ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը)
4. Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը
5. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատում
6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի գործունեության արդյունքներով շահույթի համամասնությունները հաստատելու մասին
7. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի ընտրություն

- 2014թ. հունիսի 2-ին տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, որի ընթացքում որոշվեց՝

  -Հաստատել «ՖԻՆՏԵԽ Աուդիտ» ՓԲԸ-ին որպես 2014 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ:
  -Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները:
  -Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2013 թվականի գործունեության արդյունքներով շահույթների և վնասների բաշխման համամասնությունները և տարեկան

շահութաբաժինների չափը («Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով շահույթների և վնասների բաշխում ու շահաբաժինների չափի հաստատում՝ գլխավոր պահուստ – 31.155 հազար ՀՀ դրամ, շահաբաժին – 170.400 հազար ՀՀ դրամ, չբաշխված շահույթ – 427.305 հազար ՀՀ դրամ):

- «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհուրդ ընտրել հետևյալ կազմով՝

1	Թևոսյան Սպարտակ
2	Բեգլարյան Հայկ
3	Բալյոզյան Ռաֆֆի
4	Ղոնյան Արա
5	Բոյաջյան Հայկ
6	Արաբյան Կարեն
7	Բեգլարյան Վահրամ

- 2014թ. հունիսի 19-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը:

Օրակարգի հարցերն էին.

1. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհրդի նախագահի ընտրություն:
2. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. Նոր ՓՀԷԿ-ի տեխնիկատնտեսական առաջարկի ուսումնասիրության համար փորձաքննող ընկերության ընտրություն:
4. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության փոքր բաժնետերերին հատուցման վճարում:

Քվեարկության արդյունքներով որոշվեց.

- «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի նախագահ ընտրել Սպարտակ Թևոսյանին:
- «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի քարտուղար ընտրել Դ. Բեցկովին:
- Դիմել «Հիդրոէներգետիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ նոր ՓՀԷԿ-ի տեխնիկատնտեսական առաջարկը փորձաքննելու համար:
- Ընկերության ֆիզիկական անձ հանդիսացող փոքր բաժնետերերին (10 000 բաժտետոմս և ցածր) վճարել 1 (մեկ) բաժնետոմսի անվանական արժեքի դիմաց 10,12% հատուցում:

- 2014թ. հուլիսի 9-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը, որում հաստատվեց ընկերության նոր հաստիքացուցակը:
- 2014թ. չորրորդ եռամսյակի ընթացքում արձանագրվեց արտարժույթի (ԱՄՆ դոլար և Եվրո) փոխարժեքի կտրուկ աճ: Հաշվի առնելով այն, որ Ընկերության պարտավորությունների գերակշիռ մասը արտարժույթով է (ԱՄՆ դոլար և Եվրո), արտարժույթի փոխարժեքի բարձրացումը բացասական ազդեցություն թողեց Ընկերության ֆինանսական վիճակի վրա:
- 2015թ. փետրվարի 16-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը: Նիստի ընթացքում առաջարկվեց՝

Ընկերության 2015 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով:

Քննարկել Ընկերության 2015 թվականի էլեկտրաէներգիայի կանխատեսումները:

Ընկերության «Թրղի Կասկադ» տեղամասի հաստիքացուցակի մեջ փոփոխություններ կատարել:

Հաստատել Ընկերության 2015 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Քվեարկության արդյունքներով որոշվեց.

-Ընկերության 2015 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Ս. Թևոսյան – Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ
2. Հ. Բոյաջյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
3. Ա. Պետրոսյան - Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ

-Հաստատել Ընկերության «Թրղի Կասկադ» տեղամասի հաստիքացուցակը նոր խմբագրությամբ:

-Հաստատել Ընկերության 2015 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

3.Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ ՀԷԿ-երում 2015թ. էլեկտրաէներգիայի

արտադրության կանխատեսումներ

Աղյուսակ 4

հազ.Կվտ/ժամ

հ/հ	ՀԷԿ-ի անվանում	ամիսներ												ընդամենը տարի
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	Սարսանգ ՀԷԿ	9 650	8 620	8500	8 500	10 000	10 000	2 230	2 230	2 160	13 120	12 720	13 120	100 850
2	Թրղի 1 ՓՀԷԿ	510	440	550	1 190	1 350	1 500	1 380	990	750	680	570	480	10 390
3	Թրղի 2	890	750	980	2 000	2 380	2 550	2 170	1 630	1 280	1 210	1 000	870	17 710
	Թրղի 3	0	0	0	0	1 800	1 930	1 650	1 240	970	920	760	660	9 930
4	Մատաղիս 1	2 200	2 020	2 190	2 390	2 540	2 610	390	370	410	2 630	2 630	2 530	22 910
5	Մատաղիս 2	1 320	1 220	1 300	1 350	1 440	1 450	140	150	180	1 570	1 600	1 520	13 240
	Ընդամենը	14 570	13 050	13 520	15 430	19 510	20 040	7 960	6 610	5 750	20 130	19 280	19 180	175 030

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Վահրամ Բեգլարյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	**Որպես գլխավոր տնօրեն՝** ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, ✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում, ✓ գործում է առանց լիազորագրի, ✓ տալիս է լիազորագրեր, ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ, ✓ Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական

		պատասխանատվության միջոցներ: **Որպես Խորհրդի նախագահ՝** ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:
Սպարտակ Թևոսյան	Տնօրենների խորհրդի նախագահ	✓ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, ✓ գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, ✓ կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը, ✓ նախագահում է ԲԸԺ-ներում:
Կարեն Արաբյան	Տնօրենների խորհրդի անդամ	✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:
Արմեն Գասպարյան	Տեխնիկական տնօրեն	✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրո- կայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում
Ժան Հովհաննիսյան	Ֆինանսական տնօրեն	✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում
Արայիկ Դավթյան	Գլխավոր հաշվապահ	✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, ✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, ✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:

ՁԵՎ № 1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ 31.12.2014
(ամսաթիվ, ամիս, տարի)

			ծածկագիրը
Ընկերության անվանումը	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ		50046
Փաստացի գործունեությունը	էլ. էներգիայի արտադրություն		
Հարկ վճարողի հաշվառման համարը			90025315
Պետական ռեգիստրում գրանցման համարը			44313011407
Չափի միավորը			հազ. դրամ
Գտնվելու վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	14 354 998	14 141 650
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	1 114 114	1 935 965
Ոչ նյութական ակտիվներ	030		308
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060	1 763	3 133
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	132 525	16 569
	071	132 525	16 569
	072		
	073		
	074		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**080**	**15 603 400**	**16 097 625**
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	63 545	90 467
Աճեցվող և բտվող կենդանիներ	100		
Արագամաշ առարկաներ	110	1 628	2 383
Անավարտ արտադրություն	120		
Արտադրանք	130		
Ապրանքներ	140		
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	737	211
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	630 932	1 101 114
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	210 310	9 622
Այլ դեբիտորական պարտքեր	180	172 752	2 215
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190	2 000	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	12 437	19 651
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	4 615	12 512
	211		
	212	4 615	12 512
	213		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**220**	**1 098 956**	**1 238 175**
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ	**230**	**16 702 356**	**17 335 800**

Ղեկավար Վահրամ Բեգլարյան

անուն ,ազգանուն

Կ.

Տ.

Գլխավոր հաշվապահ Արայիկ Դավթյան

անուն ,ազգանուն

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	10 650 000	10 650 000
Էմիսիոն եկամուտ	250	457 127	457 127
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260		
Կուտակված շահույթ	270	628 860	1 148 097
Պահուստային կապիտալ	280	140 874	172 029
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290	0	0
	291		
	292		
	293		
Ընդամենը սեփական կապիտալ	**300**	**11 876 861**	**12 427 253**
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	4 589 496	4 498 739
Հետաձգված հարկային պարտավորություններ	320		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330		
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350	0	0
	351		
	352		
	353		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**360**	**4 589 496**	**4 498 739**
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370		
Կարճաժամկետ փոխառություններ	380	89 241	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	29 505	201 068
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	47 758	108 621
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	7 067	
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430		25 162
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	440	16 617	15 582
Այլ կրեդիտորական պարտքեր	450	225	225
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460		
Ընթացիկ պահուստներ	470		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480	45 586	59 150
Կրած տոկոսային ծախսեր 31/12դր-մբ և Պարտատոմսերի տոկոս	481	10 285	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր արձակուրդայինի գծով	482	17 631	27 818
	483	17 670	31 332
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	**235 999**	**409 808**
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	**16 702 356**	**17 335 800**

Ղեկավար — Վահրամ Բեգլարյան

անուն ,ազգանուն

Կ. Տ.

Գլխավոր հաշվապահ — Արայիկ Դավթյան

անուն ,ազգանուն

ՁԵՎ № 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31.12.2014
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

			ծածկագիրը
Ընկերության անվանումը	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ		50046
Փաստացի գործունեությունը	էլ. էներգիայի արտադրություն		
Հարկ վճարողի հաշվառման համարը			90025315
Պետական ռեգիստրում գրանցման համարը			44313011407
Չափի միավորը			հազ. դրամ
Գտնվելու վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	2 168 442	2 795 360		
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	-633 597	-689 773		
Համախառն շահույթ (վնաս)	030	1 534 845	2 105 587	0	0
Իրացման ծախսեր	040	-2 319	-2 555		
Վարչական ծախսեր	050	-212 630	-250 657		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	1 319 896	1 852 375	0	0
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	**2 150**	**1 219**	**0**	**0**
	071	2 150	1 219		
	072				
	073				
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	**-10 211**	**-22 268**	**0**	**0**
	081	-10 211	-22 268		
	082				
	083				
Գործառնական շահույթ (վնաս)	090	**1 311 835**	**1 831 326**	**0**	**0**
Ֆինանսական ծախսեր	100	-565 410	-440 647		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110				
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	120				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	-36 694	-519 921	0	0
	131	-36 694	-519 921		
	132				
	133				
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	709 731	870 758	0	0
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150	-7 350	-7 379		
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	702 381	863 379	0	0
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	**-79 284**	**-142 587**		
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	623 097	720 792		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190	59	68		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	200				

* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

Ղեկավար՝ Վահրամ Բեգլարյան

(անուն, ազգանուն)

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ Արայիկ Դավթյան

(անուն, ազգանուն)

ՁԵՎ № 4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31.12.2014
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

			ծածկագիրը
Ընկերության անվանումը	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ		50046
Փաստացի գործունեությունը	էլ. էներգիայի արտադրություն		
Հարկ վճարողի հաշվառման համարը			90025315
Պետական ռեգիստրում գրանցման համարը			44313011407
Չափի միավորը			հազ. դրամ
Գտնվելու վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա.	հեռախոսը	954235

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ ժամանակաշրջան						Հաշվետու ժամանակաշրջան					
		Գումար	դրամարկղ		բանկային հաշիվներ		ԴՄՀ*	Գումար	դրամարկղ		բանկային հաշիվներ		ԴՄՀ*
			դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ			դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	
1	2	3	4	5	6	7	8	3	4	5	6	7	8
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**010**	79 834	1 508		7 668	70 658		12 435	131		12 218	86	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր													
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	**020**	2 559 799	1		2 559 798			2 884 250			2 884 250		
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	**030**	13 213	1 713	0	11 500	0	0	4 345	3 205	0	1 140	0	0
	031	13 213	1 713		11 500			4 345	3 205		1 140		
	032	0						0					
	033	0						0					
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	**040**	2 573 012	1 714	0	2 571 298	0	0	2 888 595	3 205	0	2 885 390	0	0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր													
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	**050**	47 622	612		46 534	476		62 541	655		61 048	838	
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	**060**	620 698	2 950		617 277	471		471 894	5 129		462 430	4 335	
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	**070**	282 729	188 523		94 206			295 687	144 723		150 964		
Վճարումներ բյուջե	**080**	288 440			288 440			507 447	2		507 445		
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	**090**	52 932			52 932			7 067			7 067		
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	**100**	21 234	3 020	0	18 211	3	0	28 437	11 875	0	16 562		0
	101	21 234	3 020		18 211	3		28 437	11 875		16 562		
	102	0						0					
	103	0						0					
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	**110**	1 313 655	195 105	0	1 117 600	950	0	1 373 073	162 384	0	1 205 516	5 173	0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**120**	1 259 357	-193 391	0	1 453 698	-950	0	1 515 522	-159 179	0	1 679 874	-5 173	0
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր													
Ոչ ընթացիկ նուրբական և ոչ նյութական ակտիվների վաճառքից	**130**	1 550	1 550					1 000	1 000				
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	**140**	180 000			180 000			6 500	6 500				
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	**150**	281			281			717			717		
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	**160**	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	161	0						0					
	162	0						0					
	163	0						0					
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	**170**	181 831	1 550	0	180 281	0	0	8 217	7 500	0	717	0	0
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր													
Ոչ ընթացիկ նուրբական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	**180**	484 905	166		470 236	14 503		321 998	174		231 006	90 818	
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից և փոխառությունների տրամադրումից	**190**	180 000			180 000			4 500	4 500				
Ներդրումային այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	**200**	2 017	0	0	2 017	0	0	1 601	0	0	1 601	0	0
	201	2 017			2 017			1 601			1 601		
	202	0						0					
	203	0						0					
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	**210**	666 922	166	0	652 253	14 503	0	328 099	4 674	0	232 607	90 818	0
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**220**	-485 091	1 384	0	-471 972	-14 503	0	-319 882	2 826	0	-231 890	-90 818	0
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր													
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից	**230**	0						0					
Ստացված վարկերից և փոխառություններից	**240**	1 450 816			40 000	1 410 816		245 338				245 338	
